ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ
12 Դեկտեմբերի 2016 թվականի N 54

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջը՝ որոշում է

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 02 արտահերթ նիստի օրակարգը.

1. Ձորաղբյուր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ /7/ Դեմ Ձեռնպահ

Հայարապետյան Էլլա

Հայրապետյան Մուշեղ

Դանոյան Դավիթ

Գրիգորյան Հուսիկ

Ղահրամանյան Նվեր

Համբյան Կարեն

Մարգարյան Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

12 Դեկտեմբերի 2016 թվականի N 55-Ն

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ձորաղբյուր համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Կողմ /7/ Դեմ Չեռնպահ

Հայարապետյան Էլլա

Հայրապետյան Մուշեղ

Դանոյան Դավիթ

Գրիգորյան Հուսիկ

Ղահրամանյան Նվեր

Համբրյան Կարեն

Մարգարյան Կարեն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

Հավելված

Զորաղբյուր համայնքի ավագանու

2016 թվ. դեկտեմբերի 12-ի թիվ 55-Ն որոշման

ՀԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԶՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արայիկ Մուքայելյանի կողմից
Հաստատվել է՝համայնքի ավագանու **12.12.2016թ** .թիվ **55-Ն** որոշմամբ

ԶՈՐԱՂԲՅՈՒՐ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ .....
4. ՋՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՋՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ձորաղբյուր համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Ձորաղբյուր համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Այն Ձորաղբյուր համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Ձորաղբյուրի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Աշխատակազմը փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ոազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման

մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Զորաղբյուր համայնքը սահմանակից է Երևան քաղաքին և մարզի 6 գյուղերի վարչական տարածքներին: Այստեղով է անցնում Երևան-Զովք-Մայակովսկի և Աբովյան-Գառնի ճանապարհները: Համայնքը Երևանից հեռու է 10 կմ, իսկ մարզկենտրոնից՝ 40 կմ: Զորաղբյուրի ներկայիս բնակչության նախնիները գաղթել են Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից 1828 թվականին:

Համայնքը ծովի մակարդակից բարձր է 1530 մ, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ անբարենպաստ:

Զորաղբյուր համայնքի վարչական տարածքը կազմում է 2692.2 հա. որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1585.3 հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 525.6 հա. արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը՝ 19.25 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 12.54 հա. հատուկ պահպանվող տարածքները՝ 25.79 հա, ջրային հողերը՝ 12.02 հա, հատուկ նշանակության հողերը՝ 7.79 հա,անտառային հողերը՝ 503.98 հա:

Զորաղբյուր համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2462 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ1.

Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	**2462**
2.	Տնայինտնտեսությունների թվաքանակը	**818**
2.1	այդթվում՝ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	**2**
2.2	Կիսակառույցներում բնակվող	-
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	**41**

Համայնքի բնակչության 51.6% կազմում են տղամարդիկ և 48.4% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմիցի ու ցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝	2462	1192	1270
	0-4 տարեկան	130	63	67
	5-7 տարեկան	82	42	40
	8-14 տարեկան	167	68	99
	15-16 տարեկան	63	26	37
	17-18 տարեկան	69	26	43
	18-62 տարեկան	1662	812	850
	63 և ավելի տարեկան	325	164	161
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	307	166	141
	Տարիքային և աշխատանքային	257	135	122
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7	2	5
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-	-	-
5.	Հաշմանդամ երեխաներ	2	1	1
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	-	-	-
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1	-	1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	-	-	-
9.	Հաշմանդամներ	52	27	25
10.	Զբաղվածներ	700		
11.	Գործազուրկներ			
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	41		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	-		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք:
Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Զորաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 47-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **61482.9** հազար դրամ, ծախսերի գծով՝ **69423.6** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **7940.7** հազար դրամ: Զորաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 19-ի թիվ 2-Ն որոշմամբ 2016 թվականի բյուջեն (ճշտված բյուջե) եկամտային մասով փոփոխվել է **61482.9** հազար դրամ, ծախսերի գծով՝ **70112.2** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **8629.3** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **71 %՝ 43666.5** հազար դրամ:
Քաղաքամերձ լինելու պատճառով համայնքի բնակչության մեծ մասը աշխատել են Երևան քաղաքի գործարաններում,իսկ համայնքում զբաղվել են անտառտնտեսությամբ:Համայնքում առանձնապես զարգացած չեն եղել գյուղատնտեսությունը և անասնապահությունը : Գործարանների փակվելուց հետո համայնքի բնակիչների մեծ մասը մնացել են առանց աշխատանքի: Այժմ Զորաղբյուր համայնքում գործում են արտադրական ձեռնարկություններ,ջերմոցային տնտեսություններ, ահատ ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման շուկան Հայաստանի Հանրապետությունն է,կատարվում է նաև արտադրանքի արտահանում: Բնակչությունը գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ հիմնականում զբաղվում է սեփական ընտանիքի նպատակների համար Համայնքում զարգանում են առևտրի փոքր և միջին ձևերը, գործում են մանրածախ առևտրի 12 խանութ, <<Մեր աշխարհ>> ,<<Գիզա>> ռեստորանային համալիրները, <<Ջամբո>> հանգստի և հանրային սննդի գոտին
Գործող ձեռնարկություններն են՝

- ✓ «Արտաշես» ՍՊԸ՝ զբաղվում է պահածոների արտադրությամբ,խմելու ջրի ջրալցմամբ
- ✓ «Մետաքս» ՍՊԸ՝ զբաղվում է սարքերի արտադրությամբ
- ✓ «Մավաէքսիմ» ՍՊԸ՝ բանջարեղենի արտադրությամբ,
- ✓ «Կագա Գրուպ» ՍՊԸ ՝բանջարեղենի արտադրությամբ
- ✓ «Մավաս Գրուպ»ՍՊԸ ՝ բանջարեղենի արտադրությամբ,
- ✓ «Ալտերնատիվ էներգիա» ՍՊԸ՝բանջարեղենի արտադրությամբ
- ✓ «Սիր Կապ Արմենիա» ՓԲԸ՝

Համայնքում գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ, քանի որ համայնքը չունի ոռոգման ցանց, նախկին ցանցը ամբողջովին քայքայվել է,հողատարածքների փոքր մասի ոռոգումը կատարվում է հիմնականում ինքնահոս եղանակով , հողերը էռոզացված են , անասնապահության զարգացման համար անհրաժեշտ է ֆերմերային տնտեսությունների ստեղծում:

Զորաղբյուր համայնքում կան պատմամշակութային հուշարձաններ՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ 19-րդ դար, Սուրբ Խաչ մատուռը՝ 10-13-րդ դար,հայտնաբերվել են դամբարանադաշտեր:

Համայնքում գործում են միջնակարգ կրթության մեկ հաստատություն՝

- ✓ «Զորաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ:

Համայնքում գործում են նախադպրոցական կրթության մեկ հաստատություն՝

- ✓ Համայնքի «Զորաղբյուր» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ,
- ✓ Մանկապարտեզը վերանորոգված է, ապահովված է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով , ջեռուցման համակարգով:

Մանկապարտեզն աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ՝ նախաճաշ, ճաշ, ետճաշիկ: Զորաղբյուր համայնքի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 48 որոշման համաձայն մանկապարտեզում 2016 թվականի համար ծնողական վճարի չափը սահմանվել է յուրաքանչյուր երեխայի համար ամսական 6000 (վեց հազար) դրամ:

Զորաղբյուր համայնքը չունի ժամանակակից մշակույթի տուն, նախկին ակումբի շենքը կառուցված 19 թվականին չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Աղյուսակ 3-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատություններում աշխատողների և ուսուցանվող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 3. Զորաղբյուր համայնքի հանրակրթական դպրոցի, նախադպրոցական ուսումնական հաստատության վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	«Զորաղբյուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	41	233
2.	«Զորաղբյուր » մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ	12	64

Զորաղբյուր համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝ «Զորաղբյուրի ամբուլատորիա» ՊՈԱԿ-ը:

Ամբուլատորիան սպասարկում է Զորաղբյուր և Ջովք համայնքների բնակչությանը:

Ամբուլատորիայի շենքը գտնվում է բարվոք վիճակում, ապահովված է ջեռուցման համակարգով, սակայն ունի արդիական բժշկական սարքերով համալրման կարիք:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

- Ձորաղբյուր համայնքի <<Ձորաղբյուր>> ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը շահագործման է հանձնվել 2010 թվականին:Մանկապարտեզ կառուցվել է50 երեխայի՝2 խմբի ,հզորությամբ,աշխատողների թիվը 12 է: Ներկայումս մանկապարտեզ հաճախում են 65 երեխա,կան նաև հերթագրված շատ երեխաներ:Մանկապարտեզի պայմանները,գույքը,տեխնիկան գտնվում են լավ վիճակում ,սակայն տարիների ընթացքում առաջացել է մանկապարտեզի վերանորոգման խնդիր,որի համար համայնքի 2017 թվականի բյուջեով նախատեսվել է 8300.0հազ դրամ: Սակայն երեխաների թվի ավելացման հետևանքով առաջացել է մանկապարտեզի ընդլայմնամ խնդիր,որի համար էլ անհրաժեշտություն է առաջացել կառուցել երկրորդ հարկ:Մանկապարտեզի վերակառուցման համար համայնքը բավարար միջոցներ չունի և գումարներ հայթայթելու դեպքում նախատեսվում է շենքի վերակառուցում:
- Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 14.8 կմ,որից 7 կն-ն կենտրոնական ճանապարհներ են:Այդ ճանապարհների 50 տոկոսը նախորդ տարիներին ենթարկվել են բարեկարգման և վերանորոգման, կառուցվել են նոր ճանապարհներ; Համայնքի զարգացման ծրագրում կշարունակվեն ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը, կվերանորոգվի գլխավոր ճանապարհը:
- Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1959 թ.-ին,որի մեծ մասը տնտեսական անկման և ֆինանսական աղության պատճառով շարքից դուրս է եկել:Նախորդ տարիներին կառուցվել են 1680 գծմ երկարությամբ երկու ջրագիծ,փորվել են խմելու ջրի երկու հորատանցք, 2011-2012թթ.կառուցվել է 370 գծմ ընդհանուր երկարությամբ ջրագիծ, վերանորոգվել են 189.2 գծմ հին ջրագծեր,սակայն խնդիրը դեռ մնում է հրատապ,ուստի սույն ծրագրով առաջարկվում է հիմնանորոգել համայնքի խմելու ջրի ներքին ցանցը:
- Ձորաղբյուր համայնքը չունի ոռոգման համակարգ,նախկին համակարգը տնտեսական անկման պատճով ամբողջությամբ շարքից դուրս է եկել:Հողատարածքների փոքր մասի ոռոգումը կատարվում է ինքնահոս եղանակով:Ոռոգման կայուն համակարգի բացակայությունը խոչընդոտում է գյուղատնտեսության զարգացմանը,ուստի անհրաժեշտ է ոռոգման նոր ցանցի կառուցում;
- Ձորաղբյուր համայնքի գլխավոր ճանապարհները հիմնականում բարեկարգ և լուսավորված են:նախորդ տարիների ընթացքում համայնքի միջոցներով կառուցվել է լուսավորման համակարգի 104 սյուն:Համայնքի 2017-2021 թթ զարգացման ծրագիրն ընդգրկում է համայնքի ներքին առավել խոշոր և բանուկ փողոցների արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները:
- Ձորաղբյուր համայնքի մշակույթի տունը,որտեղ տեղակայված էին ակումբը և գրադարանը,կիսավթարային,հարմարեցված,ժամանակակից պահանջներին չբավարարող շինություն է ,ուստի անհրաժեշտ է կառուցել նոր մշակույթի տուն:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- *համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),*
- *ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):*

Ֆինանսական կանխատեսումները պետք է արվեն 5 տարվա կտրվածքով և համեմատվեն ելակետային տարվա հետ (ՀԶԾ կազմման տարվան նախորդող տարվա փաստացի և փվյալ տարվա կանխատեսվող արժեքներ):
Հստակ պետք է բացահայտել, թե ինչի հիման վրա են արվել կանխատեսումները:
Հնարավորինս կիրառել տեքստային և աղյուսակային ներկայացում:

Ծավալի նկատմամբ սահմանափակում չկա, սակայն պետք է հիշել, որ համայնքիբյուջեն առանձին փաստաթուղթ է և կարիք չկա այն նույնությամբ ներառելու ՀԶԾ մեջ:

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում հնարավոր է փոքր գումարների չափովընդ որում տարեցտարի այդ գումարները կպակասեն: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝հարկերի, տեղական տուրքերին գույքի վարձակալությունից եկամուտների,այլ եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեջ 29 տոկոսը կազմում է պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիան: (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.12.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	76228.5	54049.6	54839.6	53370.4	53978.8	54894.9	55925.4
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	55186.0	45420.3	52816.8	53370.4	53978.8	54894.9	55925.4
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	31071.6	25202.3	31631.2	32345.3	33059.7	33935.8	35076.3
1.1	**Գույքային հարկեր անշարժ գույքից**	18628.9	16953.8	22394.2	22842.0	23298.7	23997.6	24957.4
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	14980.4	13849.2	18753.3	19128.3	19510.8	20096.1	20899.9
	Հողի հարկ	3648.5	3104.6	3640.9	3713.7	3787.9	3901.5	4057.5
1.2	**Գույքային հարկեր այլ գույքից**	11980.2	7758.5	8517.0	8687.3	8861.0	9038.2	9218.9
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	11980.2	7758.5	8517.0	8687.3	8861.0	9038.2	9218.9
1.3	**Տեղական տուրքեր**	462.5	490.0	720.0	816.0	900.0	900.0	900.0
	Պետական տուրքեր							
1.5	**Այլ հարկային եկամուտներ**							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	17676.1	16331.7	17816.4	17816.4	17816.4	17816.4	17816.4
2.1	**Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.2	**Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ**							
2.3	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**	17676.1	16331.7	17816.4	17816.4	17816.4	17816.4	17816.4
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	17676.1	16331.7	17816.4	17816.4	17816.4	17816.4	17816.4
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	6438.3	3886.3	3369.2	3208.7	3102.7	3142.7	3032.7
3.1	**Տոկոսներ**							
3.2	**Շահաբաժիններ**							
3.3	**Գույքի վարձակալությունից եկամուտներ**	1695.6	1919.3	1989.2	2038.7	2142.7	2292.7	2292.7
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության	1095.6	1369.2	1389.2	1438.7	1542.7	1692.7	1692.7

	վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	600.0	550.0	600.0	600	600	600	600
3.4	**Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում							
3.5	**Վարչական գանձումներ**	4742.7	1967.0	1180.0	970.0	760.0	650.0	540.0
	Տեղական վճարներ	150.0	210.0	180.0	170.0	160.0	150.0	140.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	4592.7	1757.0	1000.0	800.0	600.0	500.0	300.0
3.6	**Մուտքեր տույժերից, տուգանքներից**	0	0	200.0	200.0	200.0	200.0	200.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	0	0	200.0	200.0	200.0	200.0	200.0
3.7	**Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.8	**Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ**							
3.9	**Այլ եկամուտներ***							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ							
II.	**ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)**	32434.4	13547.6	15000.0	12000.0	10000.0	8000.0	6000.0
1	**Հիմնական միջոցների**							

	իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	**Պաշարների իրացումից մուտքեր**							
3	**Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր**							
4	**Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր**	32434.4	13547.6	15000.0	12000.0	10000.0	8000.0	6000.0
	Հողի իրացումից մուտքեր	32434.4	13547.6	15000.0	12000.0	10000.0	8000.0	6000.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)**	8629.3	4941.0	2022.8				
Ա.	**ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)**							
1	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**							
1.1	**Արժեթղթեր**							
1.2	**Վարկեր**							
1.3	**Փոխատվություններ**							
2	**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ**							
2.1	**Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**							
2.2	**Փոխատվություններ**							
2.3	**Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը**	21042.5	8629.3	2022.8				
2.6	**Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում**	12412.2	3688.3					
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի							

	ազատ մնացորդի գումարը							
Բ.	**ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**							
1	**ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**							
1.1	**Արժեթղթեր**							
1.2	**Վարկեր**							
1.3	**Փոխատվություններ**							

*) Հողի իրացումից գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն
(եկամտների և ծախսերի կանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. կանխատեսված	2017թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2018թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2019թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2020թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2021թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %
Ընդամենըեկամուտներ	62837.5	**62048.4**	**98.7**	**61291.4**	**96**	**62947.5**	**98.5**	**62709.1**	**99.7**	**63366.5**	100.8
Հարկայինեկամուտներ, որից	35881.4	39709.3	110.6	39709.3	110.6	40565.4	113	41427.0	115.4	42284.4	109.9
Հողիհարկ	6638.8	5904.2	88.9	5904.2	88.9	6022.2	90.7	6142.6	92.5	6265.4	94.3
Գույքահարկ	28192.6	32905.1	116.7	32905.1	116.7	33563.2	119	34234.4	121.4	34919.0	123.8
Տեղականտուրքեր	1050.0	900.0	85.7	900.0	85.7	980.0	93.3	1050.0	100	1100.0	104.7
Պաշտոնականնթացիկդրամաշն.	17676.1	**17816.4**	100.7	**17816.4**	100.7	**17816.4**	100.7	**17816.4**	100.7	**17816.4**	100.7
Այլեկամուտներ	9280.0	**4522.7**	48.7	**3765.7**	**40.5**	**3565.7**	**38.4**	**3465.7**	37.3	3265.7	35.1
Ոչֆինանսական ակտիվներիիրացումիցմուտքեր	35000.0	15000.0	42.3	12000.0	34.2	10000.0	28.5	8000.0	22.8	6000.0	17.1
Տարեսկզբիազատմնացորդ	21042.5	2022.8	9.6								
Ընդամենը	118880.0	**79071.2**	66.5	**73291.4**	**61.6**	**72947.5**	**61.3**	**70709.1**	59.4	**69366.5**	58.3
Ընդամենըծախսեր	118880.0	**79071.2**	66.5	**73291.4**	**61.6**	**72947.5**	**61.3**	70709.1	99.4	**69366.5**	**58.3**
Ընթացիկծախսեր, այդթվում	63053.5	62048.4	103.6	61291.4	97.2	62947.5	99.8	62709.1	99.4	63366.5	100.4
Տիմ-ի աղրանցենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	28755.9	30988.3	107.7	31588.3	109.8	31588.3	109.8	31588.3	109.8	31588.3	109.8
Ապրանքն. գնմանենծառ. վճ. ծախս	14115.0	11740.8	83.1	10229.7	72.5	11222.1	79.5	10591.6	75	10399.4	73.7
Սուբսիդիաներ	13884.4	13499.0	97.2	13848.9	99.7	14333.8	103.2	14533.8	104.7	14950.5	107.7
Դրամաշնորհներ	500.0	200.0	40	200.0	40	200.0	40	200.0	40	200.0	40
Սոցիալականնպաստներ	2400.0	1750.0	72.9	1800.0	75	1900.0	79.1	2100.0	87.5	2200.0	91.6
Այլծախսեր	3398.2	3870.3	113.8	3624.5	106.6	3703.3	108.9	3695.4	108.7	4028.3	118.5
Ոչֆինանսական ակտիվներիգծով ծախսեր, այդթվում	55826.5	17022.8	30.4	12000.0	26.8	10000.0	17.9	8000.0	14.3	6000.0	10.7
Հիմնականմիջոցներ	55826.5	17022.8	30.4	12000.0	26.8	10000.0	17.9	8000.0	14.3	6000.0	10.7

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարություններն ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Համայնքում ոռոգման ցանցի բացակայությունը, ինչի պատճառով շատ է դժվարանում հողատարածքների արդյունացետ օգտագործումը և հողագործության զարգացումը:
2. Համայնքի խմելու ջրի ցանցի մաշվածությունը,ինչի հետևանքով հատկապես ամռան ամիսներին առաջանում է դժվարություններ բնակչությանը խմելու ջրով լիարժեք ապահովելու հարցում:
3. Մշակույթի ժամանակակից տան պակասը դժվարացնում է ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ,
4. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը:

Վերը նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար,քանի որ դրանց համար անհրաժեշտ են կապիտալ միջոցներ, որոնք հիմնականում առաջանում են ոչ ֆինանսական միջոցների՝հատկապես հողի,օտարումից,իսկ օտարման ենթակա համայնքային նշանակության հողատարածքները տարեցտարի պակասում են

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ,
- ✓ Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը՝այն կարելի է դարձնել հանգստի գոտի,
- ✓ Համայնքի մայրաքաղաքին մոտ գտնվելը,
- ✓ Երևան-Զորաղբյուր, Զորաղբյուր-Աբովյան ճանապարհների լավ վիճակը,
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Ոռոգման ջրի համակարգի բացակայությունը
- ✓ Խմելու ջրի ներհամայնքային ցանցի մաշվածությունը

- ✓ Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների քանակի ավելացումը,
- ✓ Աշխատատեղերի պակասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Աշխատուժի առկայությունը,
- ✓ Ընդարձակ հողատարածքների և բնական կերահանդակների առկայությունը:
- ✓ Բարեխառն ,նախալեռնային կլիմայի,կանաչ տարածքների և փոքր լճակների առկայությունը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Հողերի էռոզիան,ցրտահարությունները և կարկտահարությունները
- ✓ Գործազրկության մակարդակի աճը,

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Ձորաղբյուր համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:
Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և այն կազմակերպությունների հետ,որոնք կարող են հանդես գալ,որպես համայնքում ծրագրերի իրականացման դոնորներ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,

- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	5%	4.8%	4.6%	4.4%	4.2%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	10.6%	10.6%	13%	15.4%	17.8%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	2%	2.5%	2.7%	3%	3.2%

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- ✓ Մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում և վերակառուցում:
- ✓ Համայնքի փողոցների բարեկարգումը և կառուցում
- ✓ Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում
- ✓ Ոռոգման ցանցի վերակառուցումը,
- ✓ Լուսավորման համակարգի կառուցում
- ✓ Համայնքի մշակույթի տան կառուցում և մշակութային կյանքի աշխուժացումը,

Աղյուսակ 6. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների և հիմնական նպատակների կանխատեսվող արժեքներ (2017-2021թ.թ.)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	2017	2018	2019	2020	2021
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ					
1.Աղքատությանշեմիցցածրգտնվողընտանիքներիհարաբերությունըհամայնքիընտանիքներիը նդհանուրթվին (արտահայտվածտոկոսով)	5%	4.8%	4.6%	4.4%	4.2%
2.Համայնքիսեփականեկամուտներիտարեկանաճ,արտահայտվածտոկոսով	10.6%	10.6%	13%	15.4%	17.8%
3.Համայնքումգրանցվածբնակիչներիթվիփոփոխությունընախորդտարվահամեմատ, արտահայտվածտոկոսով, չհաշվածհամայնքիբնակչությանփոփոխությունըբնականաճիպատճառով	2%	2.5%	2.7%	3%	3.2%
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ					
1.Կրթություն					
1.1.Զորաղբյուր մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում և վերակառուցում					
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը համայնքի աղբահանությունը ևսանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը,					
2.2. Համայնքի փողոցների բարեկարգում և կառուցում					
2.3. Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում					
2.4. Ոռոգման ցանցի վերակառուցում					
2.5.Լուսավորման համակարգի կառուցում					
3.Մշակույթ և սպորտ					
3.1Համայնքի մշակույթի տան կառուցում և մշակութային կյանքի աշխուժացում					

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1

«Մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում և վերակառուցում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Մանկապարտեզի վերանորոգումը կատարել համայնքի միջոցներով ,իսկ վերակառուցման համար հայթայթել միջոցներ						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Ունենալ վերանորոգված և շատ ավելի հարմարավետ մանկապարտեզ,աշխատատեղերի ավելացում**		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
			2 խումբ	3 խումբ	3 խումբ	3 խումբ	4 խումբ	4 խումբ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Համայնքի երեխաները կհաճախեն վերանորոգված և հարմարավետ մանկապարտեզ	1. Լրացուցիչ աշխատատեղերի ստեղծում							
		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
			12	12	14	14	16	16
	2. երեխաների թվի աճ							
		Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
			2016	2017	2018	2019	2020	2021
			65	65	80	80	90	90
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Դիտոնոր կազմակերպությունների փնտրում,պետական բյուջեից սուբվենցիայի տրամադրում 2.Մրցույթի հայտարարում 3.Պայմանագրի կնքում 4.Աշխատանքների կատարում							
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝130000.0 հազ դրամ Ընդհանուր բյուջեն՝130000.0 հազ.դրամ							
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ								
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարետային աղետներ							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ							
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021							
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի ,,Զորաղբյուր.. մանկապարտեզը շահագործման է հանձնվել 2010 թվականին ,հզորությունը նախատեսված էր 50 երեխայի՝2 խմբի համար,ունի 12 աշխատող:Ներկայումս մանկապարտեզ են հաճախում թվով 65 երեխա,կան շատ հերթագրված երեխաներ, մանկապարտեզն ունի վերանորոգման կարիք,իսկ երկրորդ հարկի կառուցումից հետո մանկապարտեզ կհաճախեն մոտ 90 երեխա,կստեղծվի նոր աշխատատեղեր:							

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2

«Համայնքի փողոցների բարեկարգում և կառուցում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Միջոցներ հայթայթել ճանապարհների հիմնանորոգման և կառուցման համար						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Ունենալ ավելի բարեկարգ համայնք**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Ունենալ բարեկարգ փողոցներ	1. Համայնքի ճանապարհների կառուցում / %-ով ոչ աճողական/						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		10	30	30	50	70	80
	2. Երևան-Զորաղբյուր գլխավոր ճանապարհի վերանորոգում '%						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		50	80	100	0	0	50
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Դոնոր կազմակերպությունների փնտրում 2.Համայնքի ներդրում 3.Պայմանագրի կնքում 4.Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝110000.0 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝110000.0 հազ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Զորաղբյուր համայնքում ներհամայնքային ճանապարհների հիմնականում ասֆալտապատ լինելով մշտապես պահանջում են վերանորոգում,սակայն նոր կառուցվող թաղամասերում ճանապարհները գրունտային են և անհրաժեշտ է կատարել ասֆալտապատում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

«Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի խմելու ջրի ջրագծերի ներքին ցանցի հիմնանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Համայնքի ջրագծերի ներքին համակարգի հիմնանորոգում և նոր ջրագծերի կառուցում**	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Համայնքի բնակչությանը շուրջօրյա և որակյալ ջրամատակարարման ապահովում ,հատկապես ամռան ամիսներին	1. Առկա ջրագծերի վերանորոգում և նոր ջրագծերի կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Նոր կառուցվող ջրագծերից օգտվող շահառուների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Դոնոր կազմակերպությունների փնտրում 2.Նախագծահետազոտական փաստաթղթերի ձեռքբերում 3.Մրցույթի հայտարարում 4.Պայմանագրի կնքում 5.Համայնքի ներդրում 6.Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝250000.0 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝250000.0հազ դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ձորաղբյուր համայնքի խմելու ջրի ներքին համակարգը կառուցվել է 60-ական թվականներին և գտնվում է շատ վատ վիճակում:Չնայած ընթացքում կատարված վերանորոգումներին այն անհրաժեշտ է հիմնովին վերակառուցել,հակառակ դեպքում համայնքը կկանգնի բարդ իրավիճակի առջև:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

«Ոռոգման ցանցի վերակառուցում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Հողատարածքների ոռոգում և գյուղատնտեսության զարգացում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Համայնքում գիյուղատնտեսության համար կարևորագույն խնդրի լուծում և գյուղատնտեսության զարգացում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Գյուղատնտեսության զարգացում և ոռոգվող հողատարածքների ավելացում	1.Գյուղատնտեսության զարգացում %						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0					
	1. Ոռոգվող հողատարածքների ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Դոնոր կազմակերպության փնտրում 2.Նախագծահետազոտական փաստաթղթերի ձեռքբերում 3.Համայնքի ներդրում 4.Պայմանագրի կնքում 5.Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝150000.0հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝ 150000.0հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ձորաղբյուր համայնքը չունի ոռոգման համակարգ,ոռոգվող հողատարածքների ոռոգումը հիմնականում կատարվում է ինքնահոս եղանակով,ուստի անհրաժեշտ է նոր ոռոգման համակարգի կառուցում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N5

«Լուսավորման համակարգի կառուցում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային ճանապարհների լուսավորում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Ունենալ արտաքին լուսավորությունով ապահովված անվտանգ փողոցներ**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Ապահովել բնակչությանը անվտանգ փողոցներով,որից կօգտվի համայնքի բնակչության 70%	1. Լուսավորությունից օգտվող բնակչության թիվը %						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		40	50	50	60	70	70
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Համայնքի դրամական միջոցների հավաքագրում 2. Նախագծահետազոտական փաստաթղթերի ձեռքբերում 3.Մրցույթի հայտարարություն 4.Պայմանագրի կնքում 5.Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝20000.0 հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝20000.0 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Զորաղբյուր համայնքի ներհամայնքային գլխավոր ճանապարհները լուսավորված են /104 այուն/,սակայն ներհամայնքային ճանապարհների անվտանգության համար անհրաժեշտ է կառուցել լուսավորման համակարգեր:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

«Համայնքի մշակույթի տան կառուցում և մշակութային կյանքի աշխուժացում »
(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի մշակութային կյանքի աշխուժացում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Մշակույթի տան կառուցում համայնքային արժեքների պահպանում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ Համայնքի մշակութային կյանքի ակտիվացում,աշխատատեղերի ստեղծում	1.Նոր աշխատատեղերի ստեղծում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	20	20	20
	1. Մշակույթով զբաղվող երեխաների քանակի ավելացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	30	30	30
Ծրագրի հիմնական գործողությունները	1.Դռնոր կազմակերպության փնտրում 2.Նախագծահետազոտական փաստաթղթերի ձեռքբերում 3.Մրցույթի հայտարարում 4.Պայմանագրի կնքում 5.Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝0.0 դրամ Կապիտալ ծախսեր՝180000.0հազ.դրամ Ընդհանուր բյուջեն՝180000.0 հազ.դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետներ						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018-2021թթ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Զորաղբյուր համայնքի մշակույթի տան շենքը կառուցվել է 50-ական թվականներին ,կիսաքանդ է և չի համապատասխանում ժամանակակից պահանջներին:Մշակույթի նոր տան կառուցմամբ կաշխուժանա համայնքի մշակութային կյանքը,կավելանան աշխատատեղեր ,բարեկարգ շենքում կպահպանվի համայնքի գրքային ֆոնդը:						

4. ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը: Ձորաղբյուր համայնքի ՀԶԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

(Ձորաղբյուր համայնք)

(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջետա-վորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ						Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ			
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն արդեն է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Դեռևս սպասվում է ֆինանսավորման հարց	Ֆինանսավորման հարցը լուծված չէ
1.Համայնքի մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգում և	130000.0	8300.0		26000.0	43000.0	52700.0	8300.0				121700							

վերակառուցում																		
2.Համայնքի փողոցների բարեկարգում	110000.0	10500.0	10500.0	30000.0	40000.0	110000.0	30000.0				80000.0							
3.Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	250000.0	2000.0	3000.0	5000.0	110000.0	129000.0	20000.0				230000.0							
4.Ոռոգման ցանցի հիմնանորոգումն ու վերակառուցում	150000.0						15000.0				135000.0							
5.լուսավորման համակարգի կառուցում	20000.0	1000.0	2000.0	3000.0	6000.0	8000.0	3000.0				17000.0							
6.Համայնքի մշակույթի տան կառուցում	180000.0	0	8000.0	52000.0	52000.0	66000.0	0				180000.0							

5. ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Աղյուսակ8-*ում* ներկայացված է ՀԶԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

Ձորաղբյուր համայնք

(_2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների կուտակման աղբյուրները		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիրառելի չի	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				

1.Աղքատությանշեմիցցածրգտնվողընտանիքների հարաբերությունըհամայնքիընտանիքներիընդհանուրթվին (արտահայտվածտոկոսով)																		X	Մարզպետա-րաններ (Երևան, Գյումրի, Վանաձոր, Արարատ, Ջերմուկ համայնքների համար՝ համայնքապետարաններ)	Փաստաթղթային ուսումնասիրություն/ հարցազրույց
2.Համայնքիսեփականեկամուտներիտարեկանաճ ,արտահայտվածտոկոսով																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
3.Համայնքումգրանցվածբնակիչներիթվիփոփոխությունընախորդտարվահամեմատ, արտահայտվածտոկոսով, չհաշվածհամայնքիբնակչությանփոփոխությունը բնականաճիպատճառով																		X	ՀՀ Ոստիկանութ-յուն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				
1.Կրթություն																				
1.1.Համայնքի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում և վերակառուցում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2. Համայնքիկառուցապատումը, բարեկարգումըևկանաչապատումը, համայնքիաղբահանությ																				

ունընևսանիտարականմա քրումը, կոմունալտնտեսության աշխատանքներիապահո վումը, ինչպեսնաևհամայնքայի նգերեզմանատանպահպ անումընգործունեության ապահովումը																				
2.2. Համայնքի փողոցների բարեկարգում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2.3. Խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2.4. Ոռոգման ցանցի վերակառուցում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
2.5.Լուսավորման համակարգի կառուցում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
3.Մշակույթի տան կառուցում և մշակութային կյանի աշխուժացում																				
3.1Մշակույթի տան կառուցում																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը:

2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին:

ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալիրև (կամ) համայնքի ավագանո ւանդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի(անդամների) առաջարկած այն փոփոխություններըև (կամ) լրացումները, որոնքավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանո ւնիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

12 Դեկտեմբերի 2016 թվականի N 56

ՔՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, 1-ին մասի 27-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14[3] հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 29-ի դրական եզրակացությունը և Ձորաղբյուր համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի N19-Ն որոշումը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Քաղաքացի Վալերի Ջանիբեկի Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող Ձորաղբյուր համայնքի 07-042-0365-0119 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.05854հա վարելահողից 0.004375հա վարելահողը և 07-042-0365-0114 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.81531հա վարելահողից 0.075034հա վարելահողը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Առաջարկել վերոհիշյալ քաղաքացուն հողամասերի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը եռամսյա ժամկետում մուծելու համայնքի բյուջե:

Կողմ /7/	Դեմ	Ձեռնպահ
Հայարապետյան Էլլա		
Հայրապետյան Մուշեղ		
Դանոյան Դավիթ		
Գրիգորյան Հուսիկ		
Ղահրամանյան Նվեր		
Համբյան Կարեն		
Մարգարյան Կարեն		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ